

Հայերենի «Մեղու 2018» մրցույթի մասնակցության վճարների
վերադարձման ընթացակարգ
(գործում է մինչև **2018 թ.-ի նոյեմբերի 26-ը** ներառյալ)

Հայերենի «Մեղու 2018» մրցույթի համար վճարված 970 ՀՀ դրամը վերադարձվում է, եթե երեխան չի մասնակցել մրցույթին, այսինքն՝ նրա անունը չկա դպրոցի՝ մրցույթին մասնակցող աշակերտների վերջնական ցանկում, և չկա նրա պատասխանների թերթիկը: Գումարը կարող են հետ ստանալ երեխաների ծնողները հետևյալ 2 տարբերակներից որևէ մեկով:

1. «Այբ» կրթական հիմնադրամի գրասենյակից

- ա) Ծնողը իր անձնագրով և վճարման անդորրագրի բնօրինակով կամ պատճենով (եթե այն կա) այցելում է «Այբ»-ի գրասենյակ (հասցե՝ ք. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ):
- բ) Ծնողը լրացնում է դիմումի ձևը:

2. Փոստով

- ա) Ծնողը նախապես զանգահարում է «Այբ»-ի գրասենյակ և տեղեկանում, թե որտեղից կարող է ստանալ դիմումի ձևը:
- բ) Ծնողը լրացնում է դիմումը և իր անձնագրի պատճենի ու վճարման անդորրագրի բնօրինակի կամ պատճենի (եթե այն կա) հետ միասին, մեկ ծրարով, ուղարկում փոստով՝ պատվիրված նամակով, «Այբ» կրթական հիմնադրամի հասցեին (ք. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ):

Տարբերակներից ցանկացածն ընտրելու դեպքում 970 ՀՀ դրամը փոխանցվում է դիմումում ծնողի նշած բանկային հաշվեհամարին, որը կարող է լինել ինչպես ծնողի անձնական հաշվեհամարը, այնպես էլ ծնողի կողմից լիազորված երրորդ անձինը: Եթե գումարը փոխանցվելու է երրորդ անձի հաշվեհամարին, հարկավոր է կցել նաև վերջինիս անձնագրի պատճենը:

Ի գիտություն: Հայերենի «Մեղու» մրցույթի անցկացման կարգի 6.4. կետի համաձայն՝ սույն թվականի **նոյեմբերի 26-ից** հետո դիմումներ չեն ընդունվի և «Այբ»-ը չի կարողանա վերադարձնել «Մեղու 2018» մրցույթի մասնակցության վճարները: